

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ս Մ Մ Ե Ա Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Դ ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1902

ԹԻՒ 12

ՄԻ ԱՌՁԱՐԳ

Մենք վաղուց յայնձմ ենք զանազան շըրջաններում այն միտքը թէ մենք Հայերս մի այնպիսի հիմնարկութիւն պիտի կազմենք ինչպէս Վիտնիզմն է, միայն այն տարբերութեամբ որ մեր հիմնելիքը ընկերութիւնը չպիտի ունենայ զքաղաքական իտար ձգտումներ ինչպէս ունի Վիտնիզմը : Այժմ որ զանազան դաւանութեանց Հայերն այլեւս խորշում են կրօնական խտրութիւններով բաժանուելուց եւ ցանկանում են ունենալ մի ընդհանուր ազգային սկզբունք՝ այն է ազգի քաղաքական, մտաւոր ու նիւթական յաստիպողութիւնը, հարկաւոր է ստեղծել մի հիմնարկութիւն որ ընդհանուր նշանակութիւն ունենայ ամեն դասակարգի եւ կուսակցութեան Հայերն համար եւ որի կեդրոնատեղին լինի Պարիզ, որտեղ կան քաղաքականապէս Հայեր եւ ուր մեր յայտնի բարեգործ Մանթաշեան հիմնում է Հայոց եկեղեցի :

Այդ նոր ընկերութեան նպատակն պէտք է լինի օժանդակել այն ամէն բանին որ ձգտում է Հայոց ազգի գրութիւնը բարձրացնել, օգնել որբերին, հիմնել՝ ուր հարկաւոր է ամէն տեսակ ուսումնարաններ երկու սեռի, զարգացնել մեր թատրոնը եւ մեր գրականութիւնը, օգնել հայ գրողներին եւ Հայոց դատը պաշտպանողներին, եւն :

Մեր անհաճ Մտերեցն ստեղծով ամէն տեղ քաղաքում էր թէ Հայերը պիտի մէկ ազգային սնտուկ ունենան Անդրլիանում, որի կարեւորութիւնն նա գուշակում էր, եւ զա արդարեւ զգալի եղաւ Տաճկանայոց կոտորածներից յառաջացած աղէտներէ ժամանակ : Այժմ այդ հարցն աւելի հասունացած է եւ զգալի ամենու-

րեք : Այժմ ամենայարմար վայրկեանն է հիմնելու մի ընկերութիւն Վիտնիզմի նման, որ զանազան արժէքի ակցիաներ արձակէ, որպէս զի ամէն մի հայ կարող լինի մասնակցել իր նիւթական գրութեան չափովը : Մենք վրասանացած ենք որ մի այդպիսի զանձարանի հիմնարկութիւնը սիրով կ'ողջունուի բովանդակ հայ հասարակութիւնից, այդատը կտայ նրան իր լուծման եւ հարուստը թէ՛ իր կենդանութեան եւ թէ՛ իր կրօնականութեան քոտին կը հանէ իւր կարողութիւնից :

Այդ հիմնարկութիւնն ստեղծելն արդէն, ինչպէս յիշեցինք, հասունացած հարց է դառել, եւ նա մեծ նշանակութիւն կարող է ունենալ որովհետեւ նա պիտի մեծապէս նպաստէ վառ պահել Հայի յասուկ բարեգործական ձգտումները եւ այդ ձգտումներին իրականացմանը կտայ աւելի կազմակերպեալ եւ աւելի տեսական ձեւ, եւ գուցէ զա իրանց թմրութիւնից, եսասիրութիւնից, օտարամտութիւնից զարթնցնէ մեր հարուստներին մի ստուար մասը : Եթէ հայ ազգն մնացել է ցայժմ, զա նրա բուռն կրօնական դրացմունքի շնորհիւ է եղել, եւ այդ զգացմունքն՝ իրրեւ իտէալ ստիպել է նրան անթիւ անհամար վանքեր եւ եկեղեցիներ կառուցանել, եւ նրան կարող է արել անթիւ անհամար ստապամբներ թողալ ու մնալ կանգուն՝ ի զարմանալուստուորն ազգերի Ուրբնն եթէ ի նուումն մի ընդհանուր կրօնական սկզբունք եղել է քաղաքական նեցուկ ազգին, որ եւ նրա շնորհիւ մնացել է հիմնադրական աղբերի միջից կենդանի, ապա ուրբնն պահելով եւ պահպանելով հանդերձ մեր յարգանքը զէպ ի այդ հին սկզբունքը՝ պիտի ստեղծելայժմանակույտու բազմա աւելի զօժար մըջման զիմանալու համար մի ժամանայարմար

նեցուկ : Եւ այդ նեցուկն կարող է լինել մի հայ ընկերութիւն «Սիւնիզմ»ի կազմով, եւ զուտ կուլտուրական ծրագրով : Իրան անուշտ կ'աջակցին եւ մեր օտարազգի բարեկամները : Գուցէ կը զարմանա՞ք եթէ ասեմ որ Վրացիք, համեմատաբար աւելի ազգատ, բացք բարոյապետ աւելի հարուստ, մեղանից աւելի բան կ'անեն յօգուտ իրանց ազգի վերածնութեան և յոցա համար Վրաց պիտուականները բանկին մեծ բաներ կ'անէ : պահելով թատրոնն, ուսումնարաններ, օղնիւղ գործներին, եւս և իսկ մենք զուրկ ենք այդ ամէն բանից, որովհետեւ չունինք մի այդպիսի ցանկալի հիմնարկութիւն : Եւ կարծում եմ թէ մեր բարեգործ հարուստները ամենամեծ ազգային եւ լինելու միջոցաւ ընդհանրութիւն արած կը լինեն, եթէ հիմնելին մի հայկական բանկ : Պարեզում, որի նպատակն լինի ազգի մասեր, բարոյական ու նրա թիւական յոռաջգործութիւնն, թէ ի՞նչ հիմունքներն վրայ պիտի կազմած լինի այդ հիմնարկութիւնը, թէ ի՞նչ արժողութեամբ պիտի արհակեն որ ամէն մի Հայի մասալի լինի, զրա մասին թող խորին մեր ֆրիանաբազէտներն ու առուարակներն, մանրամասնաբար ուսումնասիրելով Հրէից Սիւնիական բանին եւ նրա նման հիմնարկութիւնները : Մենք պարտք ենք համարում այս առաջակցութիւնն անել, եւ մաղթում ենք որ ձեռնհաս անմեղք բազմակողմանի քննութիւն անկողաց յետոյ անյապաղ գործարդեն այս գաղափարը :

ՌՈՒՍԱՀԱՅՑ

ՀԱՅՑ ՈՒ ՀՐԷԱՅ



Ազգային գանձարանի մը հաստատման գաղափարը, զոր վերեւ հրատարակուած յօդուածին մէջ կ'առաջարկէ « Թուսանայ » , չստ գեղեցիկ գաղափար մըն է : Զեմ զարմանաբար որ Սերենց, այդ տարրականապէս հետազան գործիչը, որ արդէն յղացած եւ առաջարկած էր ամէն ինչ որ անհրաժեշտ է մեր ապագային համար, — այդ գաղափարն ալ յղացած եւ առաջարկած ըլլալու ինչպէս զբաղադարար յղանակը հերիք չէ : Պէտք է յղացու մը իրականութեան փոխել Ստոր համար անհաստական ճիւղը չի բաւեր, — բաց ի այն պարագայէն ուր այդ ճեղք կը լըթիւնի անհաստական խոչըր գուճարի մը վրայ : հարկաւոր է հաւաքական համախոհութիւն եւ գործակցութիւն : Հարկաւոր է նաեւ գործելու պայծառ ու գիտակից մեթոտ մը : «Թուսանայ» կ'առաջարկէ իբրև. օրինակ որուն կարեւոր է հետեւել Սիւնիականներու պանթան :

Պէտք է ուրեմն նախ որոշապէս գիտնալ թէ ի՞նչ պայմաններու մէջ ի՞նչ ձեւով ծնած է Սիւնիականութիւնը եւ ի՞նչ եղած է մինչեւ այսօր անոր գործունէութիւնը : Այդ մասին ամենէն որոշ տեղեկութիւնը տալու համար հայ հասարակութեան, կը թարգմանեն մասնող կարեւորագոյն հատուածը զբըջոյի մը զոր վերջերս հրատարակած է Սիւնիականութեան զխաւոր կազմակերպիչներէն մին, Տը . Մաքս Նորտաու. եւ որ ինքնին արդէն մեծապէս հետաքրքրակն է իբրև ամիոյի պատկերացում մը ժամանակակից ընկերական-պատմական ամենէն գեղեցիկ ու յուզիչ շարժումներէն մէկուն :

« Սիւնիականութիւնը յստը նոր անուանակոչութիւնն է հին բանի մը. քանի որ կը նշանակէ այն բազմաբար զոր հրէայ ժողովուրդը ունի Սիւնը վերստին տեսնելու : Յօրնէհեռ Տիտուս երկրորդ առճար կործանեց, յորնէհեռ հրէայ ժողովուրդը ամէն երկիրներու մէջ ցրուեցաւ, այդ ժողովուրդը անդադար խանդավառօրէն բազմացած ու հաստատապէս յուսացած է հայրենի երկիրը վերապտնալ : Չէտաներուն այդ կարտուն ու յոյսը Սիւնին համար, թանձրացեալ ձեւը, կարելի է ըսել՝ աշխարհազրական երեւոյթը գարձած է Մեսոպոտի գալտեան վրայ իրենց հաւատքին, որ իրենց կրօնքին էական մասը կազմած է :

« Իրօք, Մեսոպոտիանութիւնն ու Սիւնիականութիւնը երկու հազար տարուան ընթացքի մէջ՝ համանման յղացումներ եղան, եւ խորանք ու նանրաբանութիւն միայն ըրած կ'ըլլայ մարդ Հրէից կրօնական երգեցողութեան մէջ խոստացուած Մեսոպոտի գալտեանի վերաբերող աղօթքները գատելով այն ազօթքներէն որ կը վերաբերին պատմական հայրենիքը վերադարձին՝ որ ոչ նուազ խոստացուած է : Ի՞նչ քանի մը սերունդ առաջ, բոլոր Հրէաներն այդ աղօթքները բառական իմաստով կը մեկնէին : Ինչպէս մինչև ցարդ միամիտ հաւատքը պահած Հրէաները զայն կը մեկնեն դեռ : Ուրիշ ոչինչ զիսկին տեղից գատ, թէ իրենց ժողովուրդը մըն են որ իր հայրենիքը կրննցուցած է ի պատիժ իր գործած մեղքերուն, օտար երկիրներու մէջ իբր օտար ապրելու դատապարտուած, եւ թէ իրենց չարչարանքները պիտի վերջանային միայն այն ատեն երբ վերստին հաւաքուէին նախասայրերու աշխարհին նուիրական հողին վրայ :

« Ժվ գարու կէսին, երբ ազատախոհութիւնը սկսաւ Հրէութեան մէջ թափանցել՝ զխաւտորապէս ժողովուրդական փիլիսոփայ Մովսէս Մենտելսոնի աշխատութիւններուն շնորհիւ, այս կայտու թիւը փոխուեցաւ :

« Հրէաներու հաւատքը թուլցաւ, ուսեալ աններ, եթէ պարզապէս չնախընտրէին քրիստոնէութեան յարիւ, սկսան բանավարական